



ԾԱՆՈԹԱԲԱՆԵԱՅ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆ Է՝ ԸՆԿԵՐ ԳՕԳՈՐ

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝ ԵՍ, ԳՈՒՆ, ԱՆ, ՄԵՆԵ, ԳՈՒՔ, ԱՆՈՆԵ,

ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐ՝ Կապույտի արտադրող Ե. Թուրքիան —

Կիկոսի արտադրող Գ. Թուրքիան.

(Փոփոխելի)

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

Ես եմ «Ծաղիկ» եւ ինձ զառ «Ծաղիկ» չպիտի քանչեւս :
Իմ անունն պարագայեղ զարուհակ ընտանեկ պիտի առնէ :
Իմ փառսն կանխիկ պիտի դրէ :
Ամէն մարդ պիտի յարգէ եւ գլխուն վրայ նսեցնէ զիս :
Ո՛հ ո՛հ պէտք է աչքը նետէ իմ փառայիս, քո՛ղ աչք ունեցողին աօքը
եղայ :

Պէտք է իմ փառսն ձեռ կոկորդը անցընէ :
Պէտք է նեղանալ, երբ ձեռ դրկած յողումները չսպառնին :
Պէտք է ձայն անգամ չհանէ եւ գլխուն վրայ դնէ, երբ ձեռի
դէմ գրուի այս սխալակներուն մեջ :
Երբ զառ բարկանալ, պէտք է մեղանայ :
Եւ երբ մեղանայիս մօտ ըլլալ, պէտք է... քանցալ խմէ :

Տնօրէն Ռ. Սազանեան

«ԾԱՂԻԿ» կը ճրատարակուի շաբաթը երեք անգամ ՌԶ., Գ., եւ Շաբաթ

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրգուրու խան թիւ 7

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 6 ԱՊՐԻԼ 1909

زاغيك غزتمسى درعليهده غلطهده قورشونلى خاتمهده نومرو ۷

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

«ԾԱՂԻԿ»

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՈՒՆ

Հարկ կը համարենք յայտարարել
որ, ԹՕԼԱՆԱՆ իսպառ դարեցու-
ցուած է «ԾԱՂԻԿ» զաւելտարթեր
հետ ուրէ կապակցութիւն ունենալէ,
հետեւաբար այն բաժանորդները եւ
գործակալները, որոնք հաշիւներ ու-
նին «ԾԱՂԻԿ»-ի բաժանորդագրու-
թիւններէն, պարտին ուղղակի «ԾԱ-
ՂԻԿ»-ի տնօրէնութեան հետ բանակ-
ցիլ :

Առ՝

Արտօնատէրն «ԿԱԼՐՕՇ»-ի,
Յովհաննէս էֆ. Թուրքիանի
(Եւ ոչ թէ Երուսաղէմ Թուրքիանի)

«ԾԱՂԻԿ»-ի գաւառներէ ունեցած
առնելիքները գանձելու համար, նա-
մակներ գրելու աւելորդ ձանձրոյթը
յոյնն առեր էք :

Առաջին եւ վերջին անգամ ըլլա-
լով կը յայտարարենք ձեզ թէ, եթէ
այնպիսի անպատշաճ արարքի մը մէջ
գտնուիք, պիտի ստիպուինք դատա-
րանի միջոցաւ մեր արդար իրա-
ւունքին տիրանալ, զոր անիրաւաբար
կորզել կ'երազէք :

ՅՈՒԼԻՍ 11

ԹԷԱՊՐԻԼ 1

Ժամանակն է կարծեմ պատմա-
կան քօնհիսրան մ'ընելու, բոլորո-
վին սրօքի չըսած :

Կը ինչէ՞ք Յուլիս 11ը, ճիշդ առ-
կէ տասը ամիս առաջը, եւ այդ նը-
շանաւոր օրին յաջորդող հազար ու
մեկ զինուորներու տենդային ճիւղ-
պիւնները :

Սնանկացած վաճառականներ
չատ անգամ հին, տեսարկները աչքէ
անցնելով կը մխիթարուին, եւ կամ
ամուսիններն մեռած կիներ երբ
տեսիլիք տխրելիին աստիճանը ստա-

նան, իրենց հարսնութեան օժիտէն
մնացած հին բանուած մետաքս չապիկ
մը, կամ ajour գուլպայ մը դի-
տելով՝ ժամերով կը գուարճանան :
Ինչու մենք ալ մեր տասնամ-
սեայ այդ անմոռանալի օրերու վեր-
ջիւրումովը չապրինք հիմա :

Երազի պէս կուգայ կոր հիմա
ձեզի չէ՞ այդ օրերը :

Առանց տասնոց մը ճնծալու
ժառտեմները ման գալ, cour ը-
նել աս ու ան քօքօթին, Թօգաթեա-
նը պաղ պաղ լէմօնաթ կօնծել յա-
նուն հուրիւնքի :

Դրօշակ մը բռնած սրբիս սրբիս
աս պահականոցէն անդիի կառավա-
րական պաշտօնատուներ վազել, պա-
պային առնին պէս անոր ամէն
կողմը պտտիլ, բոլոր ծակոճուկ
տեղերը որոնել :

Փաղաները. Միւշիւրները կառքե-
րը թիւսելով փոսքա ընել, փոխնե-
րը դիւահար դարձնել, եւ խաֆիէները
դնել այնպիսի դիրքի մը մէջ որ
խեղճերը ստիպուին հապուկ մէջեր-
նին խմել իրեն վախի դեղ :

Ռօպէտ Եաղճեանին, Անտօն
Կէօշէօղլուին, եւ դեռ երկար շարքը
այս տեսակ էլմասի պէս մարդոց
պատիւը մէկ փարայի ընել եւ ստիպել
զիրենք որ մուկերու պէս ծակէ ծակ
փախչին :

Հապա յեղափոխաններուն՝ պօմ-
պաճիւններուն Պոլին ըրած եռերեանին :

Պոլիսը Եդէմ կարծեցին թէ ոչ
Աւետեաց երկիրը :

Այսօր այս ինչ ֆէտային կուգայ
կոր հայտն շողեւնաւորով դիմաւո-
րելու երթալ :

Վաղը այն ինչը պիտի գայ, օրեր
առաջ խանութները կը գոցուին,
դպրոցական տղաք երգեր կը սոր-
վին, հայրենասիրական վետասու-
թիւններ կը պատրաստուին, ամէն
կողմ դրօշակ :

Իսկ դրամ :

Այդ օրերուն դրամի վրայ խօսք
չէր ըլլար :

Գաղթականները կուգան կոր,
պիտի գան, եկան վերջապէս : Զա-
նոնք տեղաւորցնել, հազուեցնել եւ
կերակրել պէտք էր :

Իրը թէ մենք չատ ունէինք քիչ

մըն ալ անոնց տուինք հալիսով մեր
չունեցածէն :

Հայերէն երգ, հայերէն ներկա-
յացում. վահրամ փափաղեալ օթի-
լօն կ'Աստուածացնէ զէմքը սեւցնե-
լով եւ ժողովուրդը խաբելով, իսկ
Ենովք Շահէն իր ազատ բեմով
կաշքանդուած թատրոնը կը ցու-
ցադրէ :

Ամէն թաղ իր թատերական
խումբը կ'ունենայ. ջրհանկիրներու
խումբերու պէս :

Թատերական խումբերու կը յա-
ջորդեն ընկերութիւններ, բարեսի-
րական, բարեգործական, բարենպա-
տակ :

Ասոնց ետեւէն Դաշնակցական,
Հնչակեան, Վերակազմեալ, Վերա-
լուծեալ եւ դեռ չեմ գիտեր ինչական
մահալլի պիօլիքները կը կազմուին :

Ամէն մարդ քովը զէնք ունի,
մինչեւ իսկ տունին կան կարասին,
կերակուրին քեմիքեմ ծախող եղաւ
խուրտալի կտորի մը տէր դառնալու
համար :

Դպրոցական ջոպուտներ պահ մը
կը մոռնան դրացիին աղջիկը կամ
cousineը :

Նուարդ, Մարի, Գաթէրին բու-
րող բերաններ, վառօղ, պօմպ, կը
պորթկան :

Տասնը հինգ տարեկանէն բռնէ
մինչեւ վաթսուներոց խաֆածը, ոչ մի-
այն բերնոց գիտէ պրաուհիի գօթ,
սվիցցվեցաւ, մալգէր անունները,
այլ զանոնք գործածելու կերպն ալ
կ'ըլլած է :

Արդէն այդ կերպը գիտնալով չէ՞
որ շատեր իրենց մօրաքոյրը, քոյրը,
եղբայրը կամ դրացին անդիի աչ-
խարճը զրկեցին անդամբանական,
խեղճերուն կտակ մը չինելու չափ
ժամանակ ալ չձգելով :

Նպաւստ, նպաւստ, նպաւստ :
Հարուստները կը սկսին քիթ բերան
ծռել, օթեակի տոմար թիկնաթոռի,
թիկնաթոռը՝ stalle ի. եւ եթէ քիչ
մըն ալ դիմանան staller արքա-
յութեան փոխարկելով քիչ քիչ :

Մենք մինչեւ այսօր գիտէինք որ
Ռուսիայէն միայն արմտիք եւ մեծ
քանակութեամբ կաշի կ'արտադուին :

Բայց սխալ. պօ՛լ պօ՛լ դերասա-
նական խումբ ալ կ'արտադուին եղեր :
Արմէնեան — Արէլեան, ետեւէն

Վրոյր — Սեւուսեան, ատոր ետեւէն
Մայսուրեան — Յարութիւնեան, ատոր
ետեւէն... բայց ա՛լ ետեւը մնաց
միեա՛լ :

Կամաց կամաց դրամագլուխը
կ'սկսի հատնիլ, անանկութի նը մօտ
է. գոնէ քանի մը հազար ներս նե-
տէինք, ան ալ չկրցանք ընել. հա-
պա խախալի պէս գացինք իրքի-
նատին բռնուեցանք :

Իբրիմա՛տ :

Կ'արժէ որ կանգ առնենք սա
խարակին առջեւ, քանի որ հովի պէս
սուրացող նաւերնիս զնաց անոր զար-
նուեցաւ վերջապէս :

Միտքս պատմութիւն մը ինկաւ :

Մարդուն մէկը «պէն» «պէն» ը-
սելով փողոցը պտտած պահուն յու-
խորտալով, յանկարծ ուրիշ մը կ'ել-
լէ եւ շրա՛խ ապտակ մը կիջնէ քեթին
բերնին «եա պէն» ըսելով սուս, կըսէ
մարդը, պի՛ր սե՛ն, պի՛ր տե պէն :

Այս իթթիհատ օլաճախն ալ սօֆ-
թայական — անարտական ապտակը
մինչեւ որ չկերաւ չկրցաւ հանգըս-
տանալ, ճիշտ անառակ տղոց պէս
որոնք մինչեւ որ մայրիկէն աղուոր
ծեծ մը չուտեն չեն շնթկիր տեղ մը :

Հասաւ ժամը որ իթթիհատն ալ
սկսի կամաց կամաց փախել Զըրէրի
հրդեհին համար հանգանակուած դը-
րամները, Նիազի էնվեր յաժանա-
ւերուն համար ժողուած նպաստները
եւ դեռ ինչերը ինչերը գոր լիւպ իր
կոկորդն անցուցած էր :

Բայց ձգենք այս ամէնը, անց-
եալին կը վերաբերին անոնք :

Մինչեւ այսօր Սասունը. Անդրա-
նիկը, ազատ Աստուածը երգեցինք,
կը բաւէ կարծեմ :

Տղաքն ալ ասանկ են, ամառ օ-
րեր մայրեր իրենց տղաքը առտուն
փողոցը կը ձգեն խաղալու համար,
մինչեւ իրիկուն :

Արեւը մարը մտնելուն պէս,

«Հայրդ կուգայ կոր» ըսելով կը
վախցնեն եւ ներս կ'առնեն զիրենք :

Մենք ալ հե՛լա աղիկ խաղացինք
ժամանակն է որ նորէն հաւնոցը մըտ-
նենք :

Շատեր ինծի կը հարցնեց թէ ինչ
պիտի ըլլայ մեր վաղուան քաղա-
քականութիւնը :

Ասիկա անանկ դժուար հարցում

ՏԳԵՂԸ

ԻՈՒՈՐ ԱՂՈՒՈՐ ՁԵՂՈՂՆԵՐՈՒՆ

մըն է որուն պատասխանը վախճում էր Երանային ալ չկարենայ տալ:

Ասկէ ամիսներ առաջ մենք ուսումնարանէն տուինք:

«Անի կեանքիս քիթիս քիթիս քիթիս»:

Այնպէս է ասիկա, այսօր ալ մենք կ'երգենք:

«Երեւելիս իմիջ հովիտի սեւիկայ արթնմազ»:

«Նէ ջարե գատիտի վարմը այրելու»:

Յուլիս տասնը մէկ հէ՛, Աստուած խելք տայ. Ապրիլ մէկ:

Ընկեր ԳՕԳՈՐ

Օրիորդ X ին (Ի Բանկայի N. * * *) նոր առած բիւնոյն վրայ աղատութեան երգը անելը:

Աշխատանքի տան աշխատութեան սկիզբը և գիշերային դասախօսութեան հանրագումարը:

Կարգ մը հին խաֆիէներու դաշնակցականներու հետ սերտ յարաբերութիւն մշակելով Սէլովմի աւազանը մտնելը:

Ռոպէր Եազըճեանին անձնասպան ըլլալով այս տաժանելի կեանքէն ազատիլ ուզելը:

ԶԱՐԳՈՒՇԱԿ

ԿՂԵՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Իզմիտի գեղածածկ խորշին մէջ ՅՅ տարիէ ի վեր քաշուած ապրող ճգնաւոր մը, որուն չեմ գիտեր ինչպէս տեղացիները ՍՈՒՐԲ անունը կը դնեն տալու:

Արտաքինը՝ թիկնեղ մարմին մը, յատկանշական քիթով մը, որուն ծակերը այնքան լայն են, որքան լայն է դպրոցին բացը:

Ներքինը՝, այնքան հաստ է մորթը որ թափանցել անկարելի է:

Թէեւ ըսած է որ «մարգարէ ի գաւառի իւրում ոչ ունի պատիւ», բայց ինք հակառակ այս ճշմարտութեան ամէն բան ունեցած է իր գաւառին մէջ, պատիւ, դրամ և իր քարոզները մոյկ ընելու համար միտ գիւղացիներ:

Նշանաւոր է իր «արքայութեան քարոզը», որ Յիսուսի Լեւոն Բարոզին պէս ժողովուրդը բերնուց գիտէ, այնքան քօճաֆիմ գացած է:

Այս մարդը կղերական ըլլալու համար ստեղծուած չէ այլ, ճարտարապետ, որովհետեւ ՍՏԷՊ ԱՆ բաղնիք փուռ, և պէտքէքիթ շինելու բնածին հալիս մը ունի:

Կրթութիւնը և Օրմանեան Սրբազանը հաւասարապէս կը սիրէ, անանկ որ եթէ ձեռքէն գայ, երկուքին ալ անունը կը ջնջէ աշխարհիս երեսէն:

Կեանքին մէջ չորս անգամ Պոլիս եկած է, անոր ալ երեք անգամը Օրմանեանի Պատրիարքութեան օրով որպէս զի այս վերջինին հասկցնէ թէ ինք ունի մէկէն կախուած չէ և իր թեմը ոչ թէ Պատրիարքարանի, այլ ուղղակի Երևոյի հետ կապուած է:

Փչող քաղաքական ՀՈՎԵՐՈՒՆ բնաւ կարեւորութիւն չտար:

Երբեմն մօտի գիւղերը կ'երթայ, բայց չկարծէ որ թեմական այցելութեան, երեք, հապա իր շինելիք նոր մէկ աղբիւրին ԱԿ մը գտնելու համար է:

Մէկ պատուէր մը ունի իր ժողովուրդին:

ԻՄ գիւղականներու մի գլխիք անկէ անդին ինչ խալթ կուտէք նէ կեղծէք:

Հիմա կու հիմա առաջնորդ, Պոլսոյ Պատրիարքութեան քանդակաւ և եթէ խղճմէք ըլլայ նէ իմինս անգամ գալստեան ալ կաթողիկոսացու:

Այս երազները իրականան կամ ոչ հոգը չէ. բաւ է որ ինք ԵԱՆ գալ և քէֆին նայի:

ԳԼԻՇԷ

ԿԸ ՎԱԽՆԱՄ ՈՐ ՆԱԿԷՍ ՄՆԱՅ

Հայերուն մովզէրը ուս դարնելով սանկ ճախայով պատերազմի երթալու երազը:

Հմայեակ Արամեանցին տպելիք նոր երկասիրութիւնը:

Միացեալին և Ազգ, Հայուհիներուն անատուրին տգէտ մանկտին լուսաւորելը:

Կարգ մը թաղային ջաթ բարձրակրթիւններուն նոր ընկալագիր տպելը:

Բերայի Հայ Երիտասարդաց Միութեան անդամներուն անգլիս գըլիւս մը ունենալը, և անդամներէն մէկ մէկ ոսկի մօտից տուրք փրցընելը:

Օրը մէկ մը միթինկ գումարելով Շիրքէթին դէմ բողոքելու իսկիւ տարցիներուն խապաւտայիութիւնը:

Շատ մը աղջիկներու կովկասահայ յեղափոխականներու հետ վիպային ամուսնութիւն կնքելու մը տաղրութիւնը:

Պոլսոյ առեւտրական պաշտօնեաներու կիտր այագ մտադրած գործադուրը:

Շատ մը օրիորդներու ՄԱՅՐ-ՀԱՅՍԱՍՆԸ բանելով սալօնը կախելը:

Միհրդատ Հայկազնին շեմշիքի խոշոր գործարան մը բանալը:

Անատուրի կեղծքուած գիւղացիներուն իրենց հողերը և գործիքները ետ տրուելը:

Յակոբ Եսայեանի Ազգ: Երեսփոխան ընտրուելը:

Բերայի քարոզչին քանի մը Պիւլիլե տէրէջի «կեցցէ Հմայեակ Սրբազան» պօռագնել տալով Պոլսոյ պատրիարք ընտրուելը:

Կովկասցի Սիրանոյին պոլսոյ բեմին վրայ երեւնալը:

Վրոյր Սեւումեան խումբին խումբներում բաղմութեան մը առջև ներկայացում մը տալը:

Նոր թերթի արտօնութիւն ստացողներու փարա վաճառելը:

Կամուրջին Անսալտօ ընկերութեան կողմէ ի հիմանէ նորոգուելը:

Խապիւղի և Մահուսէի չոգենաւերուն կրելիք բարենորոգումները:

Ահմէտ Բիզային աղջկանց համար բանալիք բարձրագոյն վարժարանը:

Մաննիկ բարեսիրտ, աղջիկ մ'էր տըգեղ,
Ծաղկաւեր դէմքով, քիթն նըման անգեղ,
Դեմի դեղին մազեր, կարճըրուկ հասակ,
Վիզ մըն ալ երկայն, կարծես ըլլար սագ:
Այդ դէմքով եթէ ուրիշ կոյս մ'ըլլար
Սեւ բախտն ամէն օր կ'անիծէր, կուլար:
Բայց կարծես Մաննիկ գոհ էր իր դէմքէն,
Օր մ'երբէք չըրաւ իր բախտին դէմ քէն:
Երբ հայելին կը կենար դիմաց
Դիտել այդ դէմքը, տխուր, ամպամած,
Միթարուելով՝ կ'ըսէր բարձրաձայն:
«Տըգեղ՝ բայց ես չեմ աղջիկներէն այն
Որոնք աղւոր բայց անպատիւ կ'ըլլան»:
Օր մ'ինչպէս կ'ըլլայ դրացի տըղան՝
Այս միթարանքն այրած սրտերու
Բախտը կ'ունենայ դէմէն լսելու:
«Բայց ներողութիւն, կը կոչէ, խոշիկ,
Ո՞ր երիտասարդ comme il faut ու chic,
Սիրարանելու կուգայ քեզի մօտ
Որ դուն ալ ըլլաս բօրօք մ'անամօթի»:

ԾԱՂԻԿԻ ՆՈՐ ԽՄԲԱԳՐԱՊԵՏԸ

Մեծահանգէս արարողութիւններ Գուրչուկ խանի կայսրութեան տակաւներուն մէջ Օրինական երդումը, սեղանը բաժակաճառերը, զիշերային խախճանութիւններ:

Երէկ կայսրութեան պաշտօնաթերթին Ծաղիկի նորընտիր խմբագրատը սրտն անունն է ԲՆԿԵՐ ԳՕԳՈՐ մասնաւոր ունկնդրութեան կոչուեցաւ կայսեր կողմէ:

Առաւօտեան ժամը Յին պալատան թիւ երկու կառքը, իր մէջ ունենալով Ա. արարողագրատը, նորին վսեմութեան ապարանքը գնաց պալատ առաջնորդելու համար զինքը:

Ժամը Կին Գուրչուկու խան հասաւ մեծաշուք թափօրը:

Ա. կառքին մէջ բաղձած էր նորին վսեմութիւնը իր դէմը ունենալով Ա. արարողագրատը:

Բաղձաթիւ չէօրի կառքեր փայլելով կ'աւելցնէին այս հանդիսաւոր գնացքին. որ չեւ գիտէր ինչ հովմը ունէր վրան, մանաւանդ խմբագրագրատին ներքին եւ արտաքին գրպաններուն մէջ:

Նորին վսեմութիւնը բալթօյին ծայրերը հանգրիճելով անցաւ եղի և ալքով բաղձաթիւ տակաւներու մէջէն և մեծ սանդուղէն առաջնորդուեցաւ ներքին ընդունելութեան դահլիճը, ուր կայսրը իր պաշտօնական համազգեստը հագած «այս եկողը ի՞նչ պիչիմ է արդեօք» սուրաթով բաղձաթիւ գրաշարները շուրջը համախմբած կ'սպասէր արդէն:

Նորին վսեմութիւն խմբագրագրատը արտաքին դրան առջև ոտքը ձեղքի մը գալով քիթին բերնին վրայ ընկաւ զոր կայսրը յարգանքի շարժում մը նկատելով բարեհաճեցաւ իր առատախուզ ժպտով փոխարինել:

Նորընտիր խմբագրագրատը առաջ

անցնելով. հանդիսաւոր ձայնով մը մեղանի շիշին վրայ ձեռքը դնելով հետեւեալ բանաձեւը երդուեցաւ:

«Ես, նորընտիր խմբագրագրատ, որ նորին Դեկտեմբերականութենէն պատուած եմ այս պաշտօնով կ'երգնում յանուն սա կոտրած կաղամարին, հաւատարիմ մնալ հետեւեալ օրէնքներուն:

1. Սիրել ընթերցողները բայց շատ երես չտալ անոնց:
2. Կամթախ երբեմն դանոնք, առանց միտերնին մօտ մօտ ընելու:
3. Շանքաք երբեք չընել և եթէ հարկը պահանջէ շահը կայսեր հետ օրթախ բայի բաժնել:
4. Միմիայն մեղանին և ձեռագիրներուն ձեռք դպցնել, բաժնեգիրներուն անունը հեռուէն լոկ լսել:
5. Խմբագրութեան եկած նաւակները բանալ եթէ պարզ են, իսկ յանձնարարեալները և mandat postereրը առանց վրան նայելու կայսեր յանձնել:
6. Խնդուք լացին խառնել, լացը գիտականին հետ շաղուել, գրականութիւնը զաւեշտին հետ ձեւփել և այս ամէնը քարկանալ ջօրպախի դարձնելով ընթերցողին հրամայելով:
7. Հրաժարիլ ուզուած պարագային տարիուկէս առաջ մասնաւոր խնդրագրով զեկուցանել կայսեր:
8. Առաւօտեան ժամը մէկ ու կէսին (Ը. Թ.) պաշտօնատեղին գտնուիլ և երեկոյին ալ կարուհի աղջիկներու հետ մեկնիլ անկէ և երբէք «ուր ժողովելու դպրի» ըսելով աս ու ան խմբագրատունը չի սլքտկալ խանգէլ խմելու համար:
9. Խմբագրատան մէջ սիրահարական նամակներ և քաղթեր չը գրել, այլ պարտաւ եղած ատենը կամ գիր ցրուել և կամ կահ կարասիին փոշին առնել:
10. Յորեկները խմբագրութեամբ զբաղելէ ետքը գիշերներն ալ խոռչիկներու ԽՄԲԱԳՐԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ չպարալիլ երբէք:

12. Երկուք ու կէս ոսկի դրամ առնելով թերթից քիթը Արեւելք կամ արեւմուտք չդարձնէ:

Երբ այս պաշտօնական արարողութիւնը վերջացաւ որոտընդոստ ծափերու մէջ նորին վսեմ. խմբագրապետը առաջնորդուեցաւ յատկապէս պատրաստուած շքանշանը ուր պատուասիրուեցաւ ձիթապտուղ հացով խանդէով և կայսերական ծխախոտով որ այդ օրը բոցառաքար իր տրամադրութեան տակ դրուած էր:

Առաջին տէրքողի ջուրի գաւաթը առաջարկեց զրաշարապետը յանուն նոր չկարդացուելիք գիրով ձեռագիրներու:

Երկրորդը առաջարկեց սրճեփը իր նոր յաճախորդին կենացը:

Երրորդը թէև նորին վսեմութիւն խմբագրապետը պիտի պարպէր. բայց երեք գաւաթ տէրքողի ջուր խմելով քի՞նք ըլլալէ վախճալով ետ կեցաւ այդ խնդութենէն:

Գիշերը մայրաքաղաքիս ամէն կողմը լուսազարդուած էր կէսը մուկեր կերած մոմերով և խտաբի ֆիթիլներով:

Խմբագրապետը վաղը պիտի կաշմէ իր դահլիճը և պիտի ներկայացնէ կայսեր վաւերացնելու համար:

ԻՐԻՐԹԹԸՐ

ՄԵԾ ԿՂԶԻԻ ԳՕՆԿՐԷՍԸ

(Ոժան տը մարտավային)



Մեծ Կղզի Ապրիլ 1

Երէկ Մեծ Կղզիի զբոսաշրջիկները Մէհմէտ Բաղդալ, Ջէքի և Մէմուռն փաշաները, այս վերջնոյն ապարանքը ժողովուելով մինչեւ ուշ ատեն խորհրդակցեցան օրուան քաղաքական կայութեան վրայ:

Ընդժովեայ հեռագրութիւնը անդադար բանեցաւ լուրեր հաղորդելով, մինչ Շիրքէթի 50 թիւ չոգենաւը նորին վսեմութեանց պէտք եղած վաւերաթուղթերը կը փոխադրէր Պոստէն Կղզի կէս ժամը մէյ մը, 13 միլ արագութեամբ բանելով ժամը:

Իրիկուան դէմ հազիւ կրցաւ հասնիլ նաեւ Նէճիպ Մէհմէտ փաշան, որովհետեւ բանտէն նոր ելած ըլլալով՝ իր փափկասուն տիկինը զինքը բաղնիք մը զրկել անհրաժեշտ նկատած էր:

Ժողովը շատ յուզումնալից անցաւ:

Սուրբաճի Պաշին յայտարարութեանց նայելով մէկ ու կէս օրս խահուէ և 12 բաքէթ առաջին տեսակէն սիկառ սպառեր է այդ օրը:

Խորհրդակցութեան գլխաւոր նիւթն էր օրուան կացութեան հանդէպ իրենց բռնելիք ուղղութիւնը:

Նէճիպ փաշան մանաւանդ սաստիկ զայրացած էր, այնպէս որ իր արդէն թուի դէմքը օրից օրս արտայայտութիւն մը ստացած էր խօսած ատենը:

— Ախ կը կոչէր նորին վսեմութիւնը. սիկառէն դեղինցած ալուածերը ցւացադրելով և բռունցքովը մահովէնիէ սեղանը կոտրելով, վրէժս պիտի լուծեմ այդ քիթերուն աղտը կրծող հայերէն, թող երթան հասկնան թէ ինչ ըսելէ Նէճիպին հետ խաղալը:

Մէմուռն փաշան ի գուր կը ջանար հանդարտեցնել նորին վսեմութեան կատաղութիւնը փաղաքշուք խօսքերով:

— Առաջին եղբայրս, այսչափ մի բարկանար, անոնց բան չըլլար, դուն քեզի կ'ընես, նայէ քիթիդ ծակերը ուռեր են Փաշա, եթէ յանկարծ արեան համախոռոմ մը ունենամ:

Կատողելու աճապարելու բան չկայ, այսօր չէ եղեր վաղը թող ըլլայ, թող շաքաթ մը ետքը ըլլայ, բաւական է որ բան մը ըլլալու հաւանականութիւնը ունինք, տես առածը ինչ կ'ըսէ:

«Սագլա սամանը, կէլիր գեմանը»։ Նայէ մենք ինչ օրեր պիտի տեսնենք, մեծ է Ալլաի, հիմա պաղ արիւնով մտածենք ընելիքնուս վրայ»:

Միւս փաշաներն ալ ասոր նման յորդորներ կարդացին, որուն վրայ քիչ քիչ հանդարտեցաւ նորին վսեմութիւնը:

Խորհրդակցութիւնները աւարտած չէին երբ հեւ ի հեւ հասան նաեւ Քէմալ և Մէհմէտ Ալի պէյերը, որոնք չօգնեալ չգտնելով մալմուս մը վարցած էին:

Իբր թէ այս վերջիններուն թէեւ իրենց նախկին պաշտօնները առաջարկուեր է, բայց իրենք մերժեր են, աստիճանի բարձրացում և աւելի մեծ պաշտօններ պահանջելով ի վարձ իրենց տասնամեայ շարձարաններուն և զրկանքներուն:

Յետ երկար խորհրդակցութեանց հետեւեալ որոշումը քուէարկուեցաւ զոր իրենց պաշտօնական թերթին մէջ պիտի հրատարակեն, եթէ սակայն Ներքին Գործոց նախարարութիւնը հաճի խնդրուած արտօնութիւնը տալ:

10 Գառաշիկայ շարթու, Մէմուռն փաշան, իբրեւ ամենէն ճարպիկը իրենցմէ, մահսուսէի չօգնեալներուն ջիւղաճիւղներուն ծպտումով Պոլիս զրկել դէպքերը մօտէն չօչափելու համար:

20 Երբ աւելի հաստատ համուզում գոյացնեն դէպքերու ինպատկանք ընթացքին, գիշերանց Պոլիս արշաւել, և կրկին տիրանալ իրենց այն հսկայ ապարանքներուն, որոնց հասարկը կը քաշեն տասը ամիսէ ի վեր:

30 Երբ մէյմը տէրութեան դէկը ձեռք անցնեն ըստ առաջնոյն, հաւասարութեան, արդարութեան և ազատութեան սին գաղափարները ջնջել ժողովուրդին մտքին մէջէն, և թուրքիան դարձնել եսկի համալ եսկի քաւ:

Փաշաները իրիկուան դէմ օդ առնելու համար պտոյտի ելան, և նաւամատոյցի գաղիճօն նստելով օդիւս բանութեամբ լաւ մը դուրսեցան:

Հակառակ խտաշունչ օդին ամէնքն ալ ծովու լողանք առին և

գիշերը ուշ ատեն «պաւ տուվար պեցիմ օ տուվար սեցիմ» քայլերգը հընչեցնել տալով զուռնա տիւմպէկին, իրենց տեղերը վերադարձան:

Երթու դարձի ժամանակ ժողովուրդը և ոստիկաններ բարեւի կեցած էին:

Բայց զարմանալի բան, այս առաւօտ, երբ իւրաքանչիւրին ապարանքին առջեւէն անցայ նոր լուրեր ստանալու համար:

Ամենուն ալ դէմքը կախ և տըլութեամբ համակուած տեսայ:

Պատճառը հարցուցի, ըսուեցաւ որ բարձրագոյն իզդէթ փաշային քաշուած ստիպողական հեռագրին պատասխանը ուշանալուն համար է. և թէ մէյմըն ալ, ուղէք հաւատացէք, ուղէք մի հաւատաք, այդ գիշերը բոլոր Փաշաներն ալ, առանց բացառութեան հեռախոսքեամբ կարծես երազնուն մէջ մէյմէկ քուսպուլիկ մանչ գիւրկերնին առեր, սեղմեր և համբուրեր են:

Երազահաններ գէշ նշան կը համարին եղեր ասիկա:

ԿՍՄԻԹՆԵՐ



Կոմսէ, բայց նայէ որ մասնեդ ոսկորի չգամ:

Սելանիկի զօրքը Չաթալճա կը հասնի, Չաթալճայի զօրքը Հատէմ Բէօյ կու գայ, Հատէմ Բէօյի զօրքըն ալ մինչեւ Խորհրդարան կ'իջնէ ստոյգ տեղեկութիւններ առնելու համար սահմանադրութեան վրայ որ փոքր ցրտառութիւն մը պատճառաւ հիւանդացած կարծուեցաւ, հապա Պոստոյ զօրքը ուր կ'երթայ:

★ ★ ★ Մեծ փոքր, օրբանձն բոլոր տէրութիւնները որոշեր են իրենց նաւատորմը Պոլիս զրկել: Մարդիկը երբ տեսան որ մենք իրենց ջուրին երթալիք չունինք նէ, անոնք սկսան մեր ջուրին երթալ:

★ ★ ★ Ատանայէն հետզհետէ հասնող հեռագիրներ կ'ըսեն թէ օոսկալի ջարդ տեղի ունեցած է, եթէ քաղաքը աւարի տրուելէ ետքը կրակի ալ տրուած է:

Աս աղէկ բաւ որ ջարդել, թալլել, և բխտաթիւնը մաքրելու համար կրակի տալ:

Կ'երեւայ որ Ատանան կուզուի հարթավայրի վերածել որպէս զի առաւ փարուցան ընելով կարելի ըլլայ յառաջիկայ տարուան սպանացող սովին առաջը առնել:

★ ★ ★ Սուլթանը իր չօրջը գըտնուողներուն լալով յայտարարեր է որ, Սահմանադրութեան համար ըրած երդումին հաւատարիմ պիտի մնան մինչեւ վերջը, թէ շատ կը ցաւի եղեր ասկէ առաջ Խորհրդարանին փակուելուն համար և թէ չուզեր եղեր թուրքիոյ Պարսկաստանի երեւոյթ տալ:

Սուլթանական այս յայտարարչ և անկեղծ յայտարարութեանց առջեւ անկարելի է զսպել արցունքը և չը գոչել, Կեծծէ վեհաֆուս ԿԱՅՄԱՐԸ:

★ ★ ★ Երազի զօրքերը հակառակ Սուլթանին հայրական խրատներուն շարունակեր են դէնք պարպել, որուն վրայ էտհէմ և Նազըմ փաշաները Պալատ գալով յորդորներ կարգացեր են զինուորներուն:

Ի նշան ուրախութեան, զօրքերը օդին մէջ գնդակ արձակեր են կրկին:

★ ★ ★ Օսմ. նաւատորմը, որ Իթի-Թի-ՀԱՏԻ կարգադրութեամբ պատրաստ վիճակի մէջ կը գտնուէր ասկէ առաջ, իր նախկին դիրքը պիտի ըստանայ եղեր Թէրսանէն հանգստեան կոչուելով:

★ ★ ★ ՎՕԼՔԱՆ ընդհանուրի հրաւեր կը կարդայ բոլոր Հօճաներուն իսկմաներուն և առհասարակ թուրքերուն, հին գօմէտին նորէն կրկնել քրիստոնեաներու հետ սուլու պաշիկներ փոխանակելով:

★ ★ ★ Բերայի Հայ Երիտ. Միութիւնը իր նոր վարձած շէնքին նորոգութիւնները դարբեցնելով յետաձգեր է քանի մը շաբթուան համար, իր ատենապետներուն տրսէվէ ըլլալուն պատճառաւ:

★ ★ ★ Սյաւընի և Իզմիրի շրջադաշը խռովութիւն ծագած ըլլալով ծովային նախարարութենէն մարտանաւ մը ուղուած էր հեռագրով:

Պահեռի մարտանաւերէն մէկը փութոյ պնդութեամբ կը նորոգուի, ճամբայ ելլելու համար:

★ ★ ★ Բերայի և արուարձաններու ազգային և մասնաւոր վարժարանները փակ էին Չատկի աւագ շաբթուն, և մինչեւ հիմա ալ փակուած կը մնայ Չատկին յաջորդող այս աւագագոյն շաբթուն ամթիւ:

★ ★ ★ Բերայի հայ-լանց գաւաղարգի կիները շատ յուզուած կերեւան վերջին դէպքերէն:

Ամառնային արդուդարդերու յանձնարարութիւններն ետ ձգեցին ամբողջ, և անոնց տեղ ճամբորդութեան tailleur գօթիւմներու ահագին գօմմտ մը տրուեցաւ շափկի, որ այս ամթիւ Եւրոպա մեկնեցաւ:

★ ★ ★ Պատրիարքական տեղապահն ալ սկսած է հենդանութիւն ցոյց տալ, այնպէս որ շաքաթ օրը իր բոլոր քաջութիւնը ժողովուելով, կրցեր է մինչեւ անգլիական գեսպանին Ա. թարգմանին մօտենալ և Ա. տանայի մասին յուսալից լուրեր ստանալ:

★ ★ ★ Գեսպանները նոր պահականաւեր խնդրեր են իրենց տէրութիւններէն ապահովութեան համար, որոնց պատասխաններ է թէ անհոգ ըլլան և թէ պէտք եղածէն աւելին պիտի զրկուի:

«ԾԱՂԻԿ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Կը խնդրենք մեր Պոստոյ եւ գաւառի բաժանորդներէն, որ եթէ կանոնադրապէս իրենց քերթերը չեն ստանար մեզ անմիջապէս իմաց տան: Նոյնպէս կը յայտարարենք որ «ԾԱՂԻԿ» ըստ առաջնոյն պիտի շարունակուի հրատարակուի շաբաթը երեք անգամ. ԲՂ, ԴՂ եւ Շաբաթ օրերը:

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ՍԱԳԱՆԱՆ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. ՍԱԳԱՆԱՆ

«ԾԱՂԻԿ» ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլսոյ	համար տարեկան	45 դրուշ
»	» վեցամսեայ	25 »
Գաւառի	» տարեկան	60 »
»	» վեցամսեայ	35 »
Արտասահմանի	»	13 ֆր.
»	»	8 »

Ոչ ոք զօրով բաժանող կ'առանգաբերի:
Դեռ քան կանխիկ չորհրդներ եւ մեր փառան ուսողներ կ'անիծենք եւ... կը խայտառակենք

La Grande Fabrique



1908Ի ՉՄԻՐԱՆ ԵՒ ԱՇԽԱՆ

ՆՈՐՈՑԹՆԵՐԸ

Փ Ն Տ Ո Ւ Ե Ց Է Ք

Շ Թ Ա Յ Ն

ՎԱՃԱՌԱՏԱՆՑ ՄԷՋ

ՊՈԼԻՍ ԵՒ ՂԱԼԱԹԻԱ



ՎԱՅԵԼՉԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՒՔ Կ՝ՈՒՋԵՆ ՊԱՇՏՊԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏԻ ԵՒ ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃԵՄԱՐԻՑ

ՔՐԻՄ ՍԻՄՈՆԸ

ԿԼԻՍԵՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1860

Ա Մ Ե Ն Ա Շ Ի Ն

ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԲԵՐԵՐ

ԿԸ ԳՏՆՈՒԻ —

ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՅ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

— ՊԱՋԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ —

ԳՆԵԼՈՒ ԱՏԵՆ ԼԱՆ ՈՂՂԱԳՐՈՒՄ ԸՆԵՂ —

— ՎԱՃԱՌԱՏՆԵՐ ԵՒ ՄԵՐԺԵՂ —

ԿԵԼՇ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆՉՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ՔՐԻՄ ՍԻՄՈՆ

ԱՌԱՅ ՊԻՍՏՈՒԹԻ

ԲԱՑԱՐԱԿԱՊԷՍ ՄԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՋ

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, քայլ էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զգոնութեանց եւ տաղաւորակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

Հայրապետ ԿՍԵՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Co

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարելաբար գործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բոլոր վանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինգերի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինգեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

- | | | |
|---------|---|---|
| ԲԱՐԱՆ | { | 1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 և 343 կրկին. |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի լիսէին գէմ. |
| ԿԱԼԱԹԱՆ | { | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | { | 1. Սուլթան Համամ, Թ. 2 |
| | | 2. Սուլթան Պաշայի, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 2 |
| ՍԿԻՏԱՐ | | 2. Զարշը Պօյու, Թ. 120. |

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարելաբար երաւարարութիւն:

Մասաճիւնդեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա Մեծ Փողոց, Թ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզիլուի տունը:



MAYER-ՄԱԵԼԻ

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ

ՀԱՆԴԵՐՁԵՆՆԵՐՈՒ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒ

ՉՄԵՌՆԱՅԻՆ ԶԳԵՍՏՆԵՐ

ԿԻՆԵՐՈՒ, ԱՅԻՐԵՐՈՒ ԵՒ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԱԺԱՆ ԵՒ ԳԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ

ԴԻՄԵՅԼԻ ԵՒ ԳՈՂ ՊԻՏԻ ՄԱՐ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՎԱՐԵՒՈՐ ՇԻՇԵՐ

(Verres pharmaceutique)

Դեղարաններու և դեղորէից վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչև հիմա Հրեայ վաճառական մը մօտօրօջ ըրած էր: Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պօղոսօֆ (կէրք էֆէնտի խան, Թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին և ունի ճիշտ ու այս լազան միջերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու և կարող է մրցիլ ամէն կերպով: Վստահ և ապահով ենք որ թէ՛ Պօլսոյ և թէ՛ Գաւառի մեր բոլոր Հայ դեղագործները և ճոկիսքները պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ և այս ճիւղին մէջ մէկ հստակ առևտրական տունէն, քաջալերելու համար Հայ ձեռնարկուն որ միևնոյն ատեն աժանութիւնը բնարան ընտրած է իրեն:

ԿՍԵՍ. ՊԱՆԱՏԱՆ ԵՒ Ս. ԱՅԱՆԵԱՆ

ՏՈՒՐՈՒ Մ. ԱՅԱՆԵԱՆ

Վկայեալ Բարիկի համալսարանէն, և անձնական ատամնաբոյժ երջանկայիշատակ Մուշաֆէրէտտին Շահին:

Բերա Մեծ Փողոց, առևտրական դեպքանատան դիմաց Սինկէրի տը Սինկէրի կը դարձանէ ամէն տեսակ ակաւայի, լիտի և բերնի հիւանդութիւններ վերջնական ընդունուած մէթոտներով, կեղծ ակաւաներ սան քրօշէ է սան բլաք տասը տարի ապահովութեամբ:

Սոյն դարձանները կը կատարուին Գաղղիական և Ամերիկեան ամենալաւրջին հնարուած գործիքներով, որով ենթական՝ ամէն տեսակ գործողութիւնները պիտի ընդունին, առանց ցաւի և առանց քնացուելու: Դարմանատունը Բարիկեան մասնագիտական վերջին սիսթէմով, իր տեսակէն մէջ եղական է: Այցելեցէ՛ք և դատեցէ՛ք: